# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## **հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 20-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/11**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար շինարարական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված տեխնիկական բնութագրում 3-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն:** 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

«Լամպ լուսադիոդային T8, երկարությունը 120սմ, 18Վտ G13 տիպի ուղիղ լամպակոթով, գունային ջերմաստիճանը 6500k, հաճախականությունը 50Հց, բռնկման լարումը 180÷240Վ. Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրանքի ստանդարտներին համապատասխան (երաշխիքը 2 տարի):»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 13)
Էլ. Փոստ՝ a.hovhannisyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ